*ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ,*

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

# ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿՈՒՄԲԱՎԱՐԻՆ

(ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳԻՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ)

№ 1

374
0-20

Լ Ո Ւ Ս Պ Ա Ր Բ Հ Ր Ա Տ

ԵՐԵՎԱՆ 1938 Թ.

374
Օ-ՁՕ
0120-10

# 1938 ԹՎԻ ՄԱՐՏ, ԱՊՐԻԼ ՅԵՎ ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ (ԳՅՈՒՂԱԿԱՆ, ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ), ՍՈՑԿՈՒԼՏՏՆԵՐԻ, ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

## 1

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ, ՍՈՑԿՈՒԼՏՏՆԵՐԻ, ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԻՉՆԵՐԻՆ, ՇՐՋԺՈՂԿՐԹԲԱԺՎԱՐՆԵՐԻՆ ՅԵՎ ՇՐՋԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻՆ

*1938 թվի մարտ, ապրիլ և մայիս ամիսների, քաղլուսաշխատանքների հիմնական խնդիրները հանդիսանում են՝*

*1. ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ ձեռք բերված ագիտացիոն-քարոզչական և կուլտուր-մասսայական աշխատանքների նվաճումների ամրացումը և խորացումը քաղլուսհիմնարկների կողմից (ակումբ, կ. անկյուն, սոցկուլտուն):*

*2. Հայկական ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունների նախապատրաստումը և անցկացումն ու քաղլուսհիմնարկների կողմից տարվելիք աշխատանքները:*

1672
38

2 SEP 2013

52.394

3. Քաղլուս աշխատանքի գծով կատարված վնասարարության հետևանքների վերջնական լիկվիդացիան։

4. Քաղլուսհիմնարկների մասնակցությունը գարնանացանի նախապատրաստման և անցկացման աշխատանքներում։ Սոցմրցության ծավալումը բրիգադների, ՄՏԿ-ների կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների միջև գարնանացանը լավագույն կերպով անցկացնելու կապակցությամբ։

5. Կազմակերպված անցկացնել՝ կանանց միջազգային օրը—մարտի 8-ը, Փարիզյան կոմունայի օրը—մարտի 18-ը, ապրիլի 17-ը Լենայի դեպքերը, դատական օրերի առթիվ հակակրոնական պրոպագանդայի ծավալումը և միջազգային պրոլետարիատի համերաշխության և պայքարի օրը մայիսի 1-ը։

ԽՍՀՄ-ի Գերագույն խորհրդի ընտրությունները մեծապես բարձրացրին մասսաների քաղաքական ակտիվությունը։ Քաղաքում և գյուղում աճեց կուսակցական և անկուսակցական ագիտատորների և պրոպագանդիստների բանակը։

Հայտնաբերվել են մասսայական ագիտ-բացատրական աշխատանքների նոր ձևեր, վորոնց միջոցով ավելի արագ կուսակցության և կառավարության վորոշումները, ԽՍՀՄ-ի միջազգային և ներքին քաղաքականությունը հասնում են աշխատավոր մասսաներին։ Անհրաժեշտ է ամրացնել աշխատավորության աճող հետաքրքրությունը դեպի քաղաքական հարցերը, դեպի մեր կյանքի սոցիալիստական սկզբունքներով վերակառուցման հարցերը։

Անհրաժեշտ է ընդհանրացնել այդ աշխատանք-



ների ամբողջ փորձը, ամրացնել աշխատանքների լավագույն փորձերը, ամրացնել և բազմացնել ակտիվը, քաղաքական հարցերի քննարկմանը մասնակից անել ազգաբնակչության նաև հետամնաց խավերին, ակտիվացնել նրանց և նշել քաղլուսաշխատանքների ծավալման և խորացման հետագա ուղիները, հագեցնելով ամբողջ աշխատանքները կոմունիզմի վոգով։

Ամեն մի գործի Լենինյան-Ստալինյան կազմակերպումը—մարտական, ակտուալ խնդիր է։

Անհրաժեշտ է անցկացնել ակումբավարների, խրճիթվարների, ակումբների ակտիվի խորհրդակցություններ, ուր ցույց տալ և տարածել լավագույն ակումբի, կարմիրանկյան, սոցկուլտտան լավագույն փորձը։

Անհրաժեշտ է հաշվետու լինել կոլտնտեսականների առաջ մեր քաղլուսհիմնարկների գործունեության համար ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրական կամպանիայի առթիվ և ամրացնել այդ ուղղությամբ յեղած դրական բոլոր փորձերը։

ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրական կամպանիան ցույց տվեց մասսաների մեջ տարվող բոլշևիկյան քաղաքական աշխատանքի հսկայական դերն ու նշանակությունը։

Գրեթե բոլոր շրջաններում գյուղական և կոլտնտեսային ակումբները յեղել են ընտրական կամպանիայի ագիտ-մասսայական աշխատանքների հենակետեր, սակայն դժբախտաբար վոչ բոլոր քաղլուսհիմնարկները կանգնած են յեղել իրենց կոչման բարձրության վրա։

Սոցկուլտտան, գյուղական և կոլտնտեսային ա-

կումբի, կարմիր-անկյան աշխատանքները պետք է ուղղված լինեն բոլշևիկյան զգաստության և անհաշտության բարձրացման համար ընդդեմ ժողովրդի բոլոր թշնամիների և ոգնեն լրիվ արմատախիլ անելու ջարդ ու փշուր յեղած, բայց դեռ վոչ ամենուրեք վոչնչացված տրոցկիստական-բուխարինական, ֆաշիստական մնացորդներին:

Ակումբների, սոցկուլտների, կարմիր անկյունների ամենօրյա աշխատանքների բովանդակությունը պետք է հանդիսանա՝ ԽՍՀՄ-ի միջազգային և ներքին դրության կարևոր դեպքերի մասին ամենօրյա քաղաքական ինֆորմացիաներ կազմակերպելը, ընթացիկ քաղաքական հարցերի բացատրությունը, թերթերի ընթերցանությունը, ԽՍՀՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի Սահմանադրությունների ուսումնասիրությունը, ընտրական կանոնադրությունների ուսումնասիրությունը, Համ. Կոմ. Կուսի (բ) Կենտկոմի հունվարյան պլենումի արդյունքների մասսայականացումը և ինտերնացիոնալ դաստիարակության հարցերը:

Քաղլուսհիմնարկների աշխատանքներում կարևորագույն տեղերից մեկը պետք է գրավի հակակրոնական պրոպագանդան:

Հակակրոնական պրոպագանդան պետք է ընթանա կրոնի դասակարգային եյության բացատրմամբ և բնական գիտությունների սիստեմատիկ և խոր մասսայականացմամբ: Այդ նպատակով ծրագրում հատուկ ուշադրություն պետք է դարձվի բնական գիտությունների և հակակրոնական դասախոսությունների, խմբակների կազմակերպման ու հակակրոնական պրոպագանդիստների, ագիտատորների և ՄԱՄ-ի բջիջների,



կազմակերպիչների կադրերի պատրաստման վրա:

1938 թիվը պետք է հանդիսանա քաղլուսաշխատանքներում յեղած վնասարարության հետևանքների վերջնական լիկվիդացիայի տարի:

Վնասարարությունը քաղլուսաշխատանքներում կայանում եր վոչ միայն նրանում, վոր սեղմում եյին քաղլուսցանցը (փակում ակումբները), այլ և գլխավորապես նրանում, վոր դուրս եյին վանում աշխատանքների քաղաքական բովանդակությունը և քայքայում անվողնաշար դարձնում քաղլուսհիմնարկների աշխատանքները:

Սոցկուլտների, գյուղական-կոլտնտեսային ակումբների ամբողջ աշխատանքը պետք է խորապես հագեցված լինի քաղաքական բովանդակությամբ, հիմնական նպատակ ունենալով աշխատավորության քաղաքական դաստիարակությունը:

Քաղլուսհիմնարկները պետք է դառնան «կոմունիստական և գյուղատնտեսական պրոպագանդի հենակետերը»:

Քաղլուսաշխատանքների բարձրացման հիմնական պայմանն է հանդիսանում կադրերի վորակավորման և նրանց ընտրությունն ավելի բարձր մակարդակի վրա հասցնելը: Անհրաժեշտ է, վոր մարտ ամսում ժողկրթբաժինները վերանայեն սոցկուլտների, բոլոր ակումբների և կարմիր անկյունների (վարիչներ, մասսավիկներ), ագիտատորների, պրոպագանդիստների կազմը, ազատելով թույլերին, վորոնք իրենց չեն արդարացնում: Մնացածներին, վորոնք աշխատանքների ընթացքում ցույց են տվել նախաձեռնություն, նվիրվածություն Լենինի-Ստալինի կուսակցու-

թյանը և հմտություն, պետք է ամրացնել ակումբներին:

Մեզ անհրաժեշտ են այնպիսի մարդիկ, վորոնք լավ յուրացրել են յեվ կիրառում են մեր կուսակցության քաղաքականությունն ու վորոշումները, լավ իրազեկ են, ըմբռնում են միջազգային և ներքին քաղաքականության հարցերը, մշտական կարդում են և լայնացնում իրենց և աշխատավորության քաղաքական և ընդհանուր կուլտուրական մտահորիզոնը:

Մեզ անհրաժեշտ են այնպիսի մարդիկ, վորոնք ճանաչում են մասսային, վորոնց հետ նրանք ամեն որ խոսում են, այլ կերպ նրանց պրոպագանդան և ագիտացիան չի հասնի իր նպատակին: Քաղլուսաշխատողները պետք է կարողանան մասսայի հետ խոսել պարզ և հասկանալի լեզվով:

Քաղլուսաշխատողն այն մարդն է, վորը սովորեցնում է մասսաներին ճանաչել թշնամուն և ժամանակին դիմակազերծ անել նրան: Նա պետք է կարողանա մերկացնել թշնամուն և հակահարված հասցնել թշնամու փափոցներին, վոտնձգություններին:

Ծրագրում պետք է նախատեսնել ակումբի խորհրդի յեվ ակտիվի ամենորյա աշխատանքները: Բոլոր քաղլուսաշխատողներին պետք է ընդգրկել քաղաքական և հատուկ ուսուցման մեջ (հեռակա դասընթացներ, կարճատև կուրսեր, ինքնազարգացում և այլն):

Քաղլուսհիմնարկները պետք է ծառայեցնել իրենց նպատակին, ազատելով գրավված սենյակները, ակումբները՝ սերմ զտելու, հանրակացարանի, պահեստի յեվ այլ նպատակների ոգտագործումից:

1938 թիվը պետք է դառնա գործող յեվ նոր բացխև ակումբների քաղաքական, կուլտուրական ամրացման յեվ կուս. ու կառավարության վորոշումների մասսական կենսագործման, քաղլուսաշխատանքների բեկման տարի (վերանորոգում, ինվենտար, կահավորում, լոզունգներ, պլակատներ, տեղեկատու աշխատանք, ինքնագործ խմբակների կազմակերպում, բյուջեյի ճիշտ ոգտագործում, ակումբի խորհրդի գործուն աշխատանք և այլն):

Վերջ պետք է դնել այն պրակտիկային, յերբ ակումբները չեն ոգտագործում իրենց բյուջեն լրիվ—Հայկական ԽՍՀ-ի մասշտաբով 1937 թ. ակումբային տարեկան բյուջեն ծախսված է 72 տոկոսով, վորը միանգամայն անթույլատրելի յե:

Անհրաժեշտ է, վոր ժողկրթբաժիններն ակումբների բյուջեները հասցնեն ակումբավարին և խիստ հսկողություն սահմանեն բյուջեյի կատարողականի վրա:

Բացի ակումբին հատկացված տեղական բյուջեյից անհրաժեշտ է ակումբային ծախսերին մասնակից դարձնել մյուս կազմակերպություններին յեվս—առաջին հերթին կոլտնտեսություններին, պրոֆմիություններին, արդյունաբերական կոոպերացիային յեվ այլն:

Ակումբային շրջտեսուչը, սոցկուլտատն և ակումբների վարիչները պետք է ակտիվ մասնակցություն ունենան կոլտնտեսությունների կուլտֆոնդերի բյուջեն կազմելիս և նախատեսնեն ակումբներին հատկացվելիք գումարները: Անհրաժեշտ է հասնել այն բանին, վոր կոլտնտեսությունների կուլտհատկացումները մաքսիմում չափով ոգտագործվեն իրենց ուղղակի նպատակներին—հատկապես քաղլուս-կուլտ-մաս-

սայական ձեռնարկումների համար (ակումբային շինարարություն, ինվենտարի գնում, շենքերի վերանորոգում, քաղաք. կամպանիաների կուլտմասսայական սպասարկում, թերթերի, գրականության և նման այլ ձեռնարկումների համար)։

1938 թ. այս ամիսների ընթացքում ակումբները պետք է ձգտեն ունենալու ռադիո-ընդունիչներ, լարային բարձրախոսներ, կինո կահավորում, դիապոզիտիվների լապտերներ, պատեֆոններ, կանոնավոր կահավորում և այլն,—մի խոսքով ակումբները պետք է յենթարկել ռադիոֆիկացիայի կինոֆիկացիայի և ստեղծել աշխատավորությանն սպասարկելու համար բոլոր կուլտուր-տեխնիկական հարմարությունները։ Այս աշխատանքի հետ կապված ծախսերը հոգալու համար կոնկրետ նախահաշիվները ժողկրթբաժինները պետք է քննության դնեն Շրջգործկոմների նախագահության նիստերին և կոլտնտեսությունների առաջ։

Այս տարի սոցիալիստական գյուղատնտեսությունը պետք է հասնի ռեկորդային բարձր բերքատվության և լրիվ կենսագործի ընկ. Ստալինի լոզունգը տարեկան 7–8 միլիարդ փութ հացահատիկ տալու մասին (1937 թ. նախնական տվյալներով մենք արդեն ստացել ենք 7 միլիարդ փութ)։

Գարնանացանը հաջող անցկացնելու համար քաղլուսհիմնարկները պետք է լրիվ և բազմակողմանիորեն մասսայականացնեն Համկոմկուսի Կենտկոմի և ԽՍՀՄ ԺԿԽ-ի դիրեկտիվը, ընկ. Եյխեյի զեկուցումը, ընկ. Մոլոտովի ելույթը հողային օրգանների աշխատողների խորհրդակցությունում, ընկ. Գ. Հարությունյանի զեկուցումը և Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ի ու ՀԿ(բ)Կ



Կենտկոմի դիրեկտիվները գարնանացանի պլանի և նրա անցկացման մասին։

Այդ կապակցությամբ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել սերմերի ծլունակության բարձր տոկոսի, սերմերի զտման և ախտահանման, սերմերով լրիվ ապահովելու, դաշտերի պարարտացման, տրակտորների և այլ գյուղատնտ. գործիքների բարձրորակ վերանորոգման, լծական անասունների նախապատրաստման, կոլտնտբրիգադների վորակյալ ուժերով կոմպլեկտավորման և ցանքից հետո սոցիալիստական դաշտերի պաշտպանության գործին (քաղհան, վոռոգում, հսկողություն հատուկ հանդապահների միջոցով և այլն)։

Վերոհիշյալ բոլոր աշխատանքները պետք է արտահայտվեն ակումբային աշխատանքներում՝ ագիտացիա և պրոպագանդա մղել պլանի լրիվ և բարձրորակ կատարելու համար, կազմակերպել թերթերի բարձրաձայն ընթերցանություններ հրատարակել լույս ընծայել պատի թերթեր և բրիգադային խլեշովկաներ, կազմակերպել ցանքսի ստախանովականների և հարվածայինների քաջալերում, ծավալել սոցմրցությունը, կազմակերպել ինքնագործ արվեստի խմբակների, պատեֆոնի և ռադիոների միջոցով կուլտգեղարվեստական սպասարկում դաշտերում, կինոցուցադրումներ ռադիոսպասարկում, քաղաքական, գեղարվեստական և գյուղատնտեսական գրականության տարածում գրքատների միջոցով, ընթերցում և այլն։ Այս բոլորը կարելի յե անել ագիտասայլերի, ագիտ ավտոների շրջիկ աշխատողների միջոցով։

Ամեն տարի հախուռն կերպով աճում է մեր աշ-

խատավորության նյութական-տնտեսական բարեկեցությունը, վորի հետևանքով և աճում է կուլտսպասարկման բարձր պահանջը։

Կարևոր և մեծ խնդիրներից է աշխատավորության միջից անգրագիտության յեվ կիսագրագիտության վերացումը։ Կուսակցության դիրեկտիվները նաև այդ մասին կատարելու և լավագույն կերպով աշխատավորությանը Հայկ. ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի ընտրություններին նախապատրաստելու համար անհրաժեշտ է ոգնել և ծավալել ակումբներում անգրագիտության վերացման գործը։

Քաղլուսհիմնարկների կարևոր բնագավառներից մեկն էլ հանդիսանում է կուլտ-կենցաղային աշխատանքի, հանգստի և գեղարվեստական սպասարկման կազմակերպման գործը։ Մեր կոլխոզնիկն այժմ ցանկանում է լսել բարձրորակ համերգ, դիտել գեղարվեստական կինո-նկար, լավ պիյես, վորոնք հագեցված են քաղաքական բովանդակությամբ և գեղարվեստական բարձր արժեքով, վորոնք պատկերում են մեր սիրելի հայրենիքի պաշտպանության հարցերը թշնամիների վոտնձգություններից և այլն։

Անհրաժեշտ է ծավալել և լայն զարկ տալ ֆիզկուլտուրային ու ռազմական խմբակների աշխատանքներին (հանձնել ՀՈՊՔ-ի, ՊԱՊ-ի նորմաները, պատրաստել վորոշիլովյան հրաձիգներ, հեծյալներ և այլն)։ Անհրաժեշտ է կազմակերպել ֆ. կ. հրապարակ, ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի խմբակներ, անցկացնել մրցումներ, հարևան կոլտնտեսությունների նույնանման խմբակների հետ և այլն։

Յուրաքանչյուր ակումբ հատուկ ժամեր և տեղ



պետք է հատկացնի յերեխաների մեջ տարվելիք աշխատանքներին — պիոներական և ԼԿՅԵՄ կազմակերպությունների միջոցով և ուսուցիչների անմիջական ոգնությամբ։

Քաղլուսհիմնարկները ու քաղլուսաշխատողները իրենք յեվս պետք է ցույց տան աշխատանքի սոցիալիստական ձևեր, մտնելով սոցմրցման մեջ, լավագույն կերպով կատարելով քաղաքական, կուլտմասսայական, գեղարվեստական սպասարկման աշխատանքները։ Որինակելի կերպով պետք է տանեն աշխատանքի ծրագրի կատարման հաշվառումը, սիստեմատիկորեն ստուգեն աշխատանքի կատարման ընթացքը, վճռական պայքար մղեն անպատասխանատվության, դիմազրկության, անկարգապահության, թափթփվածության դեմ։

II.

## ՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՏԵՍՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ 1938 Թ. ՄԱՐՏ, ԱՊՐԻԼ ՅԵՎ ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ

1. Հրավիրել քաղլուսաշխատողների (ակումբվարներ, մասսվիկներ, գրադարանավարներ, ագիտատորներ և այլն) շրջանային խորհրդակցություն, ամփոփել քաղլուսհիմնարկների կողմից ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունների առթիվ տարած քաղմասսայական աշխատանքների արդյունքները, քաղաշխատանքների նոր և բազմապիսի ձևերի փորձի փոխանակում կատարել, ամրացնել այդ աշխատանքների ակտիվ մեթոդները և այդ հարուստ փորձով զինված դի-

մավորել Հայկական ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի ընտրական կամպանիային:

2. Այդ նույն խորհրդակցության քննությանը դնել և փոխադրել կուսշրջկոմի ու շրջգործկոմի նախագահության ի հաստատություն գարնանացանի կուլտպասարկման և քաղմասսայական աշխատանքների և Հայկ. ԽՍՀ-ի Գերխորհրդի ընտրական կամպանիայի քաղ. և կուլտմասսայական աշխատանքների ծրագրերը:

Կուլտպասարկման մեջ ներգրավել շրջպատկոպին, ռադիոհանգույցին, կինոբազային, շրջթատրոնին, որոնք իրենց ուժերը պետք է իսպաս դնեն վերոհիշյալ քաղաք. և տնտեսական ինչպես և մյուս բոլոր կամպանիաներին:

3. Ակումբները և մյուս քաղլուսհիմնարկները փորձված, նվիրված, քաղաք. և կուլտուրական կադրերով ապահովելու համար վերանայել բոլոր քաղլուսաշխատողներին նրանց կադրերն ամրացնելու, թույլերից ազատվելու տեսանկյունով (չընկնելով ծայրահեղությունների մեջ):

4. 1938 թ. ակումբային ցանցի աճման պլանի համաձայն բաց անել և լրիվ կահավորել բոլոր նոր բացվելիք ակումբները (շենք, ինվենտար, վարիչ, գրականություն, թերթեր և այլն):

5. Մինչև ապրիլի 1-ը կատարել բոլոր ակումբների, սոցկուլտների, նրանց բոլոր տիպի խմբակների (Ստալինյան Սահմանադրության ուսումնասիրություն, ռազմական, քաղաքական, հակակրոնական թատերական, յերաժշտական, շախմատի, ֆիզկուլտ և մյուսների) և քաղլուսաշխատողների լրիվ հաշվեառում



ԼԺԿ-ի վիճբաժնի ձևերով (№ Վ—4) և ապրիլի 5-ին հանձնել ԼԺԿ-ի ակումբային վարչությանը:

6. Ստուգել առաջին յեռամսյակի ակումբային բյուջեյի կատարողականը, խստիվ արգելել այդ գումարներն այլ նպատակի համար ծախսելը և ձեռք առնել բոլոր միջոցները, որ քաղլուսբյուջեն լրիվ—100 տոկոսով օգտագործվի և ներգրավվի այդ նպատակների համար նաև կոլտնտեսությունների միջոցները:

7. ՄՏԿ-ի և շրջհողբաժնի միջոցով ստուգել կոլտնտեսությունների կուլտֆոնդերի ճիշտ օգտագործումը և մասհանումներ կատարել ակումբների կարիքների համար այդ գումարներից:

8. Քննել և հաստատել բոլոր ակումբների աշխատանքի յեռամսյա և մեկ ամսյա ծրագրերը և ամեն ամսի վերջին ստուգել կատարումը:

9. Շրջկենտրոնում կազմակերպել ակումբային աշխատողների վերապատրաստման կարճատև դասընթացներ (5—10 օրյա), ընդգրկել նրանց հեռակա ուսուցման ցանցում, ամրացնել դպրոցի դասատուներին քաղլուսաշխատողների որակը և ընդհանուր մակարդակը բարձրացնելու համար:

10. Կազմել առանձին գյուղ և կոլտնտակումբների կահավորման պլանը, ապահովել գյուղբյուջեյից և կոլտնտեսության միջոցներով մինչև ապրիլի վերջը ձեռք բերել այդպիսին (աթոռներ, նստարաններ, սեղաններ, խաղեր, քարտեզներ, պատեֆոն, ռադիո-ընդունիչ, գրականություն և այլն):

11. Ապահովել սույն հրահանգի առաջին գլխում

հիշված բոլոր քաղաք. և տնտեսական կամպանիաների կազմակերպված անցկացումը:

12. Կազմակերպել հսկողություն և հաշվառում քաղլուսհիմնարկների և աշխատողների սոցմրցման աշխատանքների և ակումբային շինարարության վրա և յուրաքանչյուր ամիս գրավոր մանրամասն ինֆորմացիա ուղարկել ԼԺԿ-ի ակումբային վարչությանը:

13. Անցկացնել բոլոր ակումբների խորհուրդների (նախկին վարչությունների) հաշվետու-վերընտրական աշխատանքները, խորհուրդները դարձնելով գործունյա, օպերատիվ, ճկուն ղեկավար օրգաններ:

## III

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ, ՍՈՑԿՈՒԼՏՏՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ 1938 Թ. ՄԱՐՏ, ԱՊՐԻԼ ՅԵՎ ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ

1. Հրավիրել ակումբի, գյուղի, կոլտնտեսության ակտիվի խորհրդակցություն և ամփոփել ակումբի կողմից ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունների առթիվ տարած քաղմասսայական աշխատանքների արդյունքները, ամրացնել քաղլուսաշխատանքների լավագույն փորձը և նախապատրաստվել Հայկական ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի ընտրական կամպանիային:

2. Կազմել յեռամսյա և մեկամսյա օրացուցային



պլան, վորի մեջ մտցնել սույն հրահանգի առաջին գլխում հիշված բոլոր քաղաքական և տնտեսական կամպանիաների կազմակերպված անցկացումը:

3 Յուրաքանչյուր յեռամսյակի վերջում կոլտնտեսականների կամ գյուղ համայնքի ընդհանուր ժողովում տալ հաշվետվություն ակումբի գործնեյության մասին:

4. Ակումբի աշխատանքների ծրագիրը ակումբի խորհրդում քննելուց և հաստատելուց հետո քննության դնել գյուղխորհրդի կուլտսեկցիայում և գյուղխորհրդի նախագահության նիստում հաստատելու համար:

5. Կազմակերպել ակումբին կից խմբակներ՝ (իսկ յեթե կան ուժեղացնել նրանց աշխատանքները) ԽՍՀՄ-ի և Հայկական ԽՍՀ-ի Սահմանադրությունների ուսումնասիրության, հակակրոնական-բնագիտական, քաղաքական, ընթացիկ մոմենտը ուսումնասիրող, ռազմական, ֆիզկուլտուրայի, շախմատի-շաշկի յերգեցիկ, պարի, թատերական, աշխարհագրական, գրական, կենցաղային—կար ու ձևի, կուլինարիայի, սանիտարական և այլն:

6. Կազմակերպել դասախոսություններ և զրույցներ քաղաքական հարցերի շուրջը՝ միջազգային դրության, ներքին դրության, կուսակցության և կառավարության վորոշումների, հակակրոնական, բնագիտական, սանիտարական առողջապահական և այլն:

7. Աշխատավորությանը տալ ամենօրյա քաղինֆորմացիա և թերթերի բարձրաձայն ընթերցանություն:

8. Ընտրել անհրաժեշտ գրականություն և թեր-

թեր, կազմել օրվա պատշաճ վիտրինաներ (մարտի 8-ի, մարտի 18-ի մայիսի 1-ի, Հոկտ. Հեղափոխության և այլն) և ցուցահանդեսներ:

9. Ընտրել գրուցարարներ, ագիտատորներ, պրոպագանդիստներ և մյուս ակտիվին և նրանց ամրացնել ակումբային քաղլուսաշխատանքների գանազան ընագավառներին և խմբակներին (դասախոսական աշխատանք, քաղինֆորմացիաներ, խմբակավարներ և այլն):

10. Հատուկ ուշադրություն դարձնել յերկրի պաշտպանության խմբակների աշխատանքներին (ռազմական, հրաձգային, հեծյալների և այլն):

11. Լավագույն կերպով նախապատրաստել գարնանացանի կուլտքաղպասարկման, (պատի թերթի, բրիգադային թյիչովկաների, սոցմրցման, սերմերի պատրաստման, զտման, ախտահանման, գյուղգործիքների վերանորոգման, ստախանովական շարժման լուսաբանման և ցանքսի ընթացքի ցուցանիշների տախտակի միջոցով):

12. Կազմակերպել գրքատարների, գրուցարարների, ընթերցարարների, քաղինֆորմատորների կարճատև դասընթացներ, տալ նրանց աշխատանքի ձևերի և մեթոդների մասին անհրաժեշտ ցուցմունքներ և ամրացնել ըստ բրիգադների, հողամասերի, վորտեղ աշխատելու յեն կոլտնտեսականները խմբերով:

13. Կազմակերպել կուլտսայլակ շրջիկ գրադարանով, թերթերով, ղեկավարների նկարներով, ցուցանիշների տախտակով, պատի թերթերով, պատեֆոնով, շրջիկ ռադիոընդունիչով, յերաժշտական գործիքներով և դաշտում ընդմիջումների ժամանակ անցկացնել



քաղաք-կուլտ գեղարվեստական սպասարկում:

Դյուղատնտեսական աշխատանքների հետագա շրջաններում (քաղհան, խոտհունձ, բերքահավաք, յայլայային աշխատանք) ևս շարունակել քաղլուսաշխատանքների այս ձևերը:

14. Բրիգադների, օղակների, առանձին աշխատողների մեջ (տրակտորիստ, կոմբայնավար, մաճկալ և այլն) ծավալել սոցմրցումը և լավագույն փորձի փոխանակման միջոցով ոգնել հետ մնացողներին հասնելու ստախանովականներին, առաջավորներին:

15. Կազմակերպել տեղեկատու աշխատանքներ քաղաքական տնտեսական, իրավական, կենցաղային, կուլտուրական և այլ աշխատանքների շուրջը: Անցկացնել հարց ու պատասխանի յերեկոներ:

16. Ակումբի, սոցկուլտտան, կարմիր անկյան կատարած քաղլուս և կուլտ. գեղարվեստական աշխատանքների մասին պարբերաբար գրել կենտրոնական և շրջանային թերթերին և ամեն ամիս գրավոր ինֆորմացիաներ ներկայացնել ակումբային շրջանային (ժողկրթբաժնին):

ՀՅԱԿ. ԽՍՀ -ի ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ (ՀԱՅԿԱԶՈՒՆԻ)

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԼՈՒՍԲԱԺԻՆՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ, ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ, ԽՐՃԻԹ — ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

1. Յուրաքանչյուր շրջանի ժողկրթբաժնում առանձնացված է ակումբային և գրադարանային աշխատանքների գծով հատուկ տեսուչ։

2. Ակումբային և գրադարանային շրջտեսուչը նշանակվում է և ազատվում աշխատանքից շրջժողկրթբաժվարի կողմից, անպայման ԼԺԿ-ի վավերացումից հետո։

3. Ակումբային և գրադարանային շրջտեսուչը՝ հաշվետու յե շրջժողկրթբաժնի և ԼԺԿ-ի ակումբային և գրադարանային վարչությունների առաջ։

4. Շրջտեսուչն ուսումնասիրում և ընտրում է ակումբային և գրադարանային կադրերը նրանց աշխատանքի նշանակելու համար և ներկայացնում է շրջժողկրթբաժվարին ի հաստատություն։ Ակումբվարների և գրադարանապետների աշխատանքի ընդունելությունը և արձակումը պետք է վավերացվի ԼԺԿ-ի կողմից։

5. Շրջտեսուչը հսկում և ստուգում է ակումբների խրճիթ-ընթերցարանների և գրադարանների աշխատանքներն, անկախ այն բանից թե ում բյուջ-



ջեյի մեջ են գտնվում նրանք, (պետական, տեղական, կոլխոզի, պրոֆմիության), օգնում է նրանց իրագործելու և մասսայականացնելու դիրեկտիվ—գերադաս օրգանների վորոշումները, վորի համար նա կատարում է հետեվյալը,

ա) Շրջում է գյուղերը ստուգելու կուլտհիմնարկները (ակումբ, կարմ. անկյուն, խրճ. ընթերցարան, գրադարան և այլն) և կոնկրետ-գործնական օգնություն է ցույց տալիս վարիչներին իրագործելու ծրագրերը և հերթական քաղաքական—կուլտուրական աշխատանքները ·

բ) Ամսական մեկ անգամ հրավիրում է ակումբների, կարմ.անկյունների, խրճիթների և գրադարանների վարիչներին շրջանային սեմինար պարապմունք-խորհրդակցություն և հրահանգավորում է նրանց առաջիկա քաղաքական, կուլտուրական աշխատանքների մասին և ամփոփում անցած ամսվա աշխատանքները.

գ) Կազմակերպում է աշխատանքի լավագույն փորձի փոխանակման գործը, լսելով զեկուցումներ խորհրդակցություններում, սեմինարներում, կազմակերպում է էքսկուրսիաներ դեպի լավագույն ակումբը գրադարանը և այլն։

դ) Շրջգործկոմի համաձայնությամբ հրավիրում է գյուղխորհուրդների և նրանց լուսսեկցիաների նախագահների խորհրդակցություններ ակումբային և գրադարանային աշխատանքների շուրջը և հարկ յեղած դեպքում այս կամ այն հարցը շրջգործկոմի նախագահության նիստն է փոխադրում անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար։

յե) Կազմակերպում է աշխատավորների կուլտուր-

պահանջների հաշվառումը գյուղերի և ակումբների վարիչների զեկուցումները աշխատավորների ժողովներում լսելու միջոցով:

6. Շրջտեսուչը մասնակցում է կուլտհիմնարկների,(ակումբ, խրճիթ ընթերցարան, կարմ. անկյուն գրադարան) բյուջեն կազմելու աշխատանքներին գյուղխորհդում ֆինբաժնում, կոլտնտեսությունում և հսկում է հատկացված գումարների լրիվ և իր նպատակին ծախսելուն:

7. Շրջտեսուչը մասնակցում է ակումբային շինարարության պլանների կազմելու գործին և հսկում է շինարարության ընթացքին և ժամանակին ավարտելուն:

8. Շրջտեսուչը կատարում է կուլտհիմնարկների հաշվառումը ԼԺԿ—ի հատուկ ձևով

9. Շրջտեսուչը ղեկավարում է նաև սոցկուլտուրայի տան աշխատանքները և կազմակերպում է սոցկուլտ տան, օգնությունը մյուս՝ ակումբների, կարմ. անկյան., խրճիթ ընթերցարանների, և գրադարանների նկատմամբ:

Սույն հրահանգն ուղարկվում է ի անշեղ կիրառումն:

---

## ՍՈՑԿՈՒԼՏՏՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԿԱՀԿԱՐԱՍԻՆԵՐԻ

## ՈՐԻՅԵՆՏԻՐ ՑՈՒՑԱԿ

### I ԱՐՏԱՔԻՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

| | |
|---|---|
| 1. Ցուցանակ . . . . . . . . . . . . . . | 1 |
| 2. Կարմիր դրոշակներ . . . . . . . . . . | 2 |
| 3. Հայտարարությունների տախտակ . . . . | 1 |
| 4. Ճակատը լուսավորելու ելեկտրական կամ նավթի հատուկ լապտեր . . . . . . . . | 2 |
| 5. Վորքերը ցեխից մաքրելու համար յերկաթյա քերիչներ . . . . . . . . . . . . | 2 |
| 6. Արտաքին ռադիո-բարձրախոս . . . . . . | 1 |

### II. ՆԵՐՔԻՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

| | |
|---|---|
| 1. Կուս. և կառավ. ղեկավարների նկարները շրջանակներով . . . . . . . . . . . . . | |
| 2. ԽՍՀՄ-ի հերոսների, գրողների, գիտնականների նկարները շրջանակներով . . . . . | |
| 3. Ընթերցարանի համար յերկար սեղաններ | 2 |
| 4. Գրասեղաններ արկղներով . . . . . . . | 2 |
| 5. Սեղաններ փոքր՝ խմբակային պարապմունքների համար . . . . . . . . . . . . . . | 10—15 |
| 6. Աթոռներ (վենական) ընթերցարանի, խմբակային պարապմունքների համար . . . . | 50—60 |
| 7. Նստարաններ կամ աթոռներ դահլիճի համար — վորքան անհրաժեշտ է . . . . . . | |
| 8. Դիվան . . . . . . . . . . . . . . . . | 1 |
| 9. Փափուկ բազկաթոռներ . . . . . . . . | 4—6 |

10. Աղբամաններ— (ըստ կարիքի, սենյակներում) . . . . . . . . . . . . . . .
11. Թքամաններ—(սենյակներում) . . . . .
12. Գրաֆին— ջրի համար—բաժակով (ըստ (կարիքի) . . . . . . . . . . . . . . .
13. Վերարկուների կախարաններ (ըստ անհրաժեշտության) . . . . . . . . . . .
14. Հայելի . . . . . . . . . . . . . . . . 1
15. Թերթերի և ամսագրերի ետաժերկաներ . 3—4
16. Գրքերի պահարաններ . . . . . . . . . 4—5
17. Պահարաններ գույքերի համար . . . . . 2—3
18. Հայտարարությունների և գրքի ցուցադրման վիտրինաներ . . . . . . . . . 2—3
19. Կրակմարիչներ (ըստ անհրաժեշտության) 3
20. Պատի ժամացույց . . . . . . . . . . 1
21. Սեղանի ժամացույցներ . . . . . . . . 1—2
22. Ջերմաչափներ . . . . . . . . . . . . 3—4
23. Բարոմետր . . . . . . . . . . . . . . 1
24. Պատի և սեղանի օրացույցներ . . . . . 2—3
25. Գեղարվեստական նկարներ շրջանակներով—(ըստ անհրաժեշտության) . . . .
26. Ծաղիկներ (բուսականություն) ծաղկամաններով— (ըստ անհրաժեշտության և սենյակների քանակի) . . . . . . . . . .
27. Լվացարան . . . . . . . . . . . . . . 1
28. Սեղանների սփռոցներ (ըստ սեղանների քանակի) . . . . . . . . . . . . . . .
29. Զանավեսկաներ — (ըստ լուսամուտների քանակի) . . . . . . . . . . . . . . .
30. Էլեկտրական կամ նավթի լամպաներ— (ըստ անհրաժեշտության) . . . . . . .
31. Ջրի դույլեր . . . . . . . . . . . . . 3—4



32. Նավթի ամաններ . . . . . . . . . . . 1
33. Կացին, սղոց, բահ, թի, մուրճ—մեկական
34. Կոզպեքներ—ըստ անհրաժեշտության . .
35. Աղբարկղ—(բակում, դրսում) . . . . . . 1
36. Դեղարկղ . . . . . . . . . . . . . . . 1
37. Հատակի խոզանակներ կամ ավելներ . .

## III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ՅԵՎ ԿՈՒԼՏ ԻՆՎԵՆՏԱՐ

1. Գրատախտակներ . . . . . . . . . . . 3
2. Աշխարհագրական քարտեզներ . . . . . 5—7
3. Ստալինյան Սահմանադրութ. պլակատներ— (կոմպլեկտ)
4. Գլոբուս . . . . . . . . . . . . . . . 1
5. Գյուղատնտեսական պլակատներ—(կոմպլեկտ)
6. Խոշորացույց—(դպրոցական) . . . . . . . 1
7. Հակակրոնական պլակատներ (կոմպլեկտ) . 1
8. Բնագիտական » (կոմպլեկտ) . 1
9. Վարակիչ հիվանդութ. դեմ պայքարելու պլակատներ (կոմպլեկտ)
10. Ռազմա-պաշտպանության պլակատներ (կոմպլեկտ)
11. Փոքր տրամագիծ հրացան . . . . . . . . 2—3
12. Վարժական հրացան և փամփուշտներ . . 1
13. Ռումբերի կտրված մոդելներ . . . . . . 2—3
14. Հակագազ . . . . . . . . . . . . . . 2—3
15. Ձիու հակագազ . . . . . . . . . . . . 1
16. Հակաօդային-քիմիական պաշտպանության պլակատներ (կոմպլեկտ)
17. Նշանառության հաստոց (հրացանի) . . . 1
18. Հրացանի այլ պարագաներ—(կոմպլեկտ)

19. Ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի գնդակներ . . . . . . . . . . . . . . . . . . 6—10
20. Վոլեյբոլի և բասկետբոլի ցանց . . . . . 1—2
21. Ֆիզկուլտ «Պարապուկ»—լրիվ խաղերով
22. Գնդակների համար—նասոս . . . . . . 1
23. Սկավառակ, գունդ, նիզակ, նռնակ, ձող—կոմպլեկտ
24. Տուռնիկ . . . . . . . . . . . . . . . . 1
25. Դահուկներ . . . . . . . . . . . . . . 5 զույգ
26. Չմուշկներ . . . . . . . . . . . . . . 5 »
27. Սեղանի բիլիարդ . . . . . . . . . . . 2 հատ
28. Շախմատ, շաշկի, դոմինո—5-ական կոմպլեկտ
29. Պատեֆոն պլաստինկաներով
30. Լարային յերաժշտ. գործիքներ ըստ անհրաժեշտության։
31. Վրձիններ, մկրատ, ներկեր, թուղթ, կավ, քանոն, լոգունդի ծայրեր, կարդոն—ըստ անհրաժեշտության
32. Յեթերային ռադիո-ընդունիչ . . . . . . 1
33. Բարձրախոսներ . . . . . . . . . . . . 3
34. Մոգական լապտեր (պլիոսկոպ) . . . . . 1
35. Բեմի կահավորում (կեղծամներ, կոստյումներ, ռեկվիզիտներ, գրիմ և այլն)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ա) Նշված խնվենտարը պետք է ձեռք բերել ըստ տվյալ ակումբի շենքային հարմարությունների և պայմանների։

բ) Ֆինանսական միջոցները կազմում են ակումբի բյուջեյում նախատեսված և կուլտուսուլթյուններից ստացվելիք գումարները։



[library stamp, illegible] ...-СОРА

Պատ. խմբագիր Հ. Հայկազունի
Տեխ. խմբագիր Ա. Մալխասյան
Սրբագրիչ Հ. Մայիլյան
Գլավլիտ № 6552
Տիրաժ — 1000
Պատվեր № 222

«Խորհրդային Հայաստան» Հրատ. Տպարան Երևան

ՀՀ Ազգային գրադարան
NL0223805

149
52.394